«Տարվա լավագույնները» մրցույթի մասնակցության ծրագիր

Հեղինակ՝
«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի դասավանդող՝ Վարդան Կարապետյան /Պատմություն-հասարակագիտություն/

Անվանակարգ՝
հանրակրթական ուսումնական հաստատության ուսումնաօժանդակ գործունեության լավագույն ծրագրի համար

2. Հասարակագիտական ստուգատեսը՝ ուսումնական բաց հարթակ /համակարգող՝ Վարդան Կարապետյան/

Ընդհանուր նկարագիր՝
«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի օրացույցով յուրաքանչյուր տարվա մարտի 1-ից կրթահամալիրում մեկնարկում է հասարակագիտական ամենամյա ստուգատեսը, որի ընթացքում հասարակագետ դասավանդողները սովորողների հետ իրականացնում են մի շարք հասարակագիտական նախագծեր և նախագծային աշխատանքներ, հանդես գալիս քաղաքացիական տարբեր նախաձեռնություններով՝ դաս-քննարկումներ, կլոր սեղաններ, հանդիպումներ հասարակական-քաղաքական, հանրային տարբեր գործիչների հետ, կրթական փոխանակումներով ճամփորդություններ, ակումբային գործունեություն, այլ. . .
Այս տարի նույնպես ունեցանք ստուգատեսի ակտիվ, հագեցած շրջան, որն արտացոլված է ստուգատեսի օրացույցում:

Հասարակագիտական ստուգատեսի շրջանում իրականացված բազմաթիվ նախաձեռնություններից ես կառանձնացնեմ հրավիրյալ մասնագետների հետ հանդիպումների շարքը, որի **հիմնական նպատակն է՝**
-սովորողները կենդանի շփում են ունենում տարբեր հասարակական-քաղաքական-հանրային գործիչների հետ՝ քաղաքագետ, իրավաբան, պատմաբան, ազգագրագետ, թուրքագետ, իրանագետ, ադրբեջանագետ, սոցիալական մարդաբան, իրավապաշտպան, պատգամավոր, այլ…
-նրանց հետ քննարկում են ամենատարբեր արդիական թեմաներ, հանդես գալիս իրենց լուսաբանում-վերլուծություններով, կարծիքներով, ամենատարբեր դիրքորոշումներով
-այսպիսի հանդիպումները նաև նպաստում են սովորողների մասնագիտական ճիշտ կողմնորոշմանը

Իրականացման քայլեր՝
-մինչ հանդիպումը՝ նախ պայմանավորվում ենք հյուրի հետ, ստանում նրա համաձայնությունը, միասին որոշում հանդիպման օրը, ժամը, վայրը
-այնուհետև հյուրի հետ միասին որոշում ենք հանդիպում-քննարկման թեման

/հաճախ թեման առաջարկում են սովորողները/
-քննարկման թեման և հյուրի մասին նախապես հավաքած ուսումնական նյութերը /կենսագրական տեղեկություններ, հոդվածներ, հարցազրույցներ, գրքեր և այլն/ ուղարկվում են սովորողներին, որպեսզի կարդան, ուսումնասիրեն և պատրաստվեն հանդիպմանը /նախապատրաստական աշխատանք, որը հրապարակվում է սովորողի բլոգում/
-իրականացվում է հանդիպում-քննարկումը, որից հետո սովորողները հանդես են գալիս իրենց լուսաբանումներով, պատումներով, դիտարկում-վերլուծություններով

Հասարակագիտական ստուգատեսի օրացույցով մարտի 18-19-ը «Տիգրան Հայրապետյանական» օրեր են կրթահամալիրում՝ ի հիշատակ միջազգայնագետ-հրապարակախոս Տիգրան Հայրապետյանի, ում անունն է կրում «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի գրադարանի կենտրոնական ընթերցասրահը: Եվ ահա, մարտի 18-ին և 19-ին Տիգրան Հայրապետյանին նվիրված երկու կլոր սեղան ունեցանք, որին Միջին-Ավագ դպրոցների սովորողները և Քոլեջի ուսանողները առանձնահատուկ ձևով ներկայացան: Սովորողները և ուսանողները հանդես եկան Տիգրան Հայրապետյանի հոդվածների ընտրանու վերլուծություններով…բավական հասուն լսարան, հայացք ունեցող սովորողներ, հիմնավոր կարծիքներ, սեփական պատկերացումներ ու մոտեցումներ…տպավորիչ էր…սովորողների վերլուծությունները նաև դարձան Մեդիագրադարանի փաթեթ:

Հասարակագիտական ստուգատեսն ունի նաև կրթահամալիրի դասավանդողին և սովորողին, նրանց աշխատանքը գնահատող-խրախուսող բաղադրիչ՝ «Տիգրան Հայրապետյան» ամենամյա մրցանակ՝
-կրթահամալիրի մանկավարժական աշխատողին՝ հասարակագիտական, քաղաքացիական կրթության նախագծերի իրականացման, քաղաքացիական նախաձեռնողականության, այլոց իրավունքների պաշտպանության համար.
կրթահամալիրի միջին, ավագ դպրոցների, քոլեջի սովորողին՝ հասարակագիտական, քաղաքացիական ուսումնական նախագծերի իրականացման, քաղաքացիական նախաձեռնողականության, այլոց իրավունքների պաշտպանության համար:

Այս տարվա՝ 2021-ի «Տիգրան Հայրապետյան» հասարակագիտական մրցանակը շնորհվեց մայրենիի դասավանդող Մարիետ Սիմոնյանին և սովորողներ Արթենի Ջանիկյանին (9-րդ դասարան), Անահիտ Ասատրյանին (10-րդ դասարան):

«Տիգրան Հայրապետյան 2021» մրցանակակիր դասավանդող Մարիետ Սիմոնյանը գրում է՝
«Այս անգամ անցածս ճանապարհը վերաիմաստավորելու առիթ դարձավ ընկերներիս կողմից ինձ «Տիգրան Հայրապետյան» մրցանակի ներկայացնելը: Առաջին բանը, որ մտածեցի, այն էր, թե, տեսնես, ես համապատասխանո՞ւմ եմ այս մրցանակին, թե՞ ուղղակի գործընկերներիս բարի կամքի արտահայտությունն է եղել առաջադրումը: Բացում եմ «Տիգրան Հայրապետյան» մրցանակին ներկայացվող

պահանջները. «Կրթահամալիրի մանկավարժական աշխատողին՝ հասարակագիտական, քաղաքացիական կրթության նախագծերի իրականացման, քաղաքացիական նախաձեռնողականության, այլոց իրավունքների պաշտպանության համար»:
Ուզում եմ հասկանալ՝ ճի՞շտ եմ հասկանում քաղաքացիական բառի նշանակությունը: Բացում եմ Արդի հայերենի բացատրական բառարանը և նայում եմ բառի բացատրությունը: Այն նշանակում է նաև՝ «հասարակության բարօրության, հասարակության շահերին վերաբերող»:

Իրենց ապրումների և հույզերի մասին գրում են նաև մրցանակակիր սովորողները. *«Այդ երեք-չորս ժամերը ինձ համար այնքա՜ն երկար էին թվում…վերջապես եկավ այդ պահը, և Տիար Բլեյանը կարդաց իմ անունը: Ուղղակի չեմ կարող նկարագրել այդ պահի իմ զգացողությունները…շա՜տ, շա՜տ, շա՜տ ուրախ եմ, որ արժանացա նման կարևոր մրցանակի: Ուրախ եմ, որ իմ կատարած աշխատանքները գնահատվեցին: Յանկանում եմ ասել, որ միշտ պետք է աշխատել, ուղղակի աշխատել, ուսումնասիրել, կարդալ, սովորել»,-գրում է 9-րդ դասարանի սովորող, «Տիգրան Հայրապետյան 2021» մրցանակակիր Արթենի Ջանիկյանը:*

«Ես յոթ ամիս է, ինչ կրթահամալիրում եմ, բայց նվիրվեցի անմնացորդ, զգացի, որ այն հենց իմ վայրն է ու իմ մի մասնիկը…Ես չեմ փոշմանել իմ ընտրության մեջ: Ահա, ես պարգևատրվեցի իմ կատարած աշխատանքի համար և համոզվեցի փոխադարձ վստահության մեջ…նաև ինձ ընծայեցին ծաղիկներ, պատվոգիր և գումար»,-գրում է 10-րդ դասարանի սովորող, «Տիգրան Հայրապետյան 2021» մրցանակակիր Անահիտ Ասատրյանը:

Շարունակականության ապահովում՝
Ինչպես վերը նշեցի՝ հասարակագիտական ստուգատեսը կրթահամալիրում ամենամյա է, սակայն սովորողների ցանկությամբ և պահանջով հրավիրյալ մասնագետների հետ հանդիպումների շարքը կլինի շուրջտարյա, յուրաքանչյուր ամիս կունենանք երկու հյուր /սեպտեմբերի 16-ին արդեն նախաձեռնել և իրականացրել ենք բաղաբագետի հետ հանդիպում/:

Արդյունք՝
Ստուգատեսի շրջանում կրթահամալիր մտան տարբեր բնագավառների, տարբեր մասնագիտությունների տեր տասնյակ մարդիկ՝ գրող-սցենարիստ, դիվանագետ, քաղաքագետ, վրացագետ, հանրային և պետական գործիչ, ֆեմինիստ, դեսպան, այլ…կենդանի շփում, կենդանի զրույց, նոր ծանոթություններ, նոր կապեր և հետագա համագործակցությունների լայն հնարավորություն:

Ստուգատեսի արդյունքների ամփոփիչ փաթեթ /իրականացված աշխատանքներ/՝
-Ստուգատեսի օրացույց
-Սովորողների վերլուծությունները՝ Մեդիագրադարանում

-Կլոր սեղան՝ ստուգատեսի ամփոփում, որտեղ հրապարակված են ստուգատեսի ամենշաբաթյա օրացույցը, հրավիրյալ մասնագետների հետ հանդիպումների լուսաբանումները, Տիգրան Հայրապետյանի օրը, սովորողների վերլուծությունները, մրցանակակիրները, սովորողների՝ ստուգատեսային ամփոփումները…մի խոսքով՝ ամեն ինչ
-Հասարակագիտական ստուգատեսը՝ ուսումնական բաց հարթակ /Դպիրյան հոդված/.

Միրով՝ Վարդան Կարապետյան
Հասարակագիտական ստուգատեսի համակարգող